ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻՆ

13.07.2016 12:56

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան և ՀՀ փաստաբանների պալատի միջև պայմանավորվածության համաձայն, դեսպանատունը ՀՀ փաստաբանների պալատի կայքում գրանցված փաստաբանական գրասենյակներին ուղարկելու է համագործակցության հրավերներ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին Հայաստանում իրավաբանական օգնություն ցույց տալու համար առաջարկվող կազմակերպությունների ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ներառելու համար։

Հայաստանում գտնվող ՌԴ քաղաքացիներն իրենց իրավունքների պաշտպանության համար հնարավորություն են ունենալու դիմել Ցանկում ներառված փաստաբանական գրասենյակներին։

Փաստաբանական գրասենյակի կողմից դեսպանատան հրավերին արձագանքելուց հետո, Ցանկում ներառելու հարցը որոշելու է ՌԴ իրավասու մարմինը կամ ներկայացուցիչը։

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })